Կոտ ու կես

1. Կոտ ու կես կորեկ ունեմ ցանելու համար,
   Ճընճղուկներ թրռան էկան ուտելու համար,
   Կրռացա քար վեր առա զարկելու համար:

Կրկնակ.

Այ ճընճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սպիտակ փորիկ,
Ուտեն կըտիկ,
Խըմեն ջըրիկ,
Առվի եզրիկ,
Պըստիկ-մըստիկ,
Փախչեն, էրթան
Ման գալու համար:

2. Թրռան, գացին բերդի տանիս գանգըտելու համար,
   Ղասաբներ ժողվան եկան դեղմաշկի համար,
   Երեցներ ժողվան եկան օրհնելու համար:

Կրկնակ.

Այ ճընճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սպիտակ փորիկ,
Ուտեն կըտիկ,
Խըմեն ջըրիկ,
Առվի եզրիկ,
Պըստիկ-մըստիկ,
Փախչեն, էրթան

Ման գալու համար:

3. Ռեսներ ժողվան եկան խորվածի համար,
   Գուսաններ ժողվան եկան գովելու համար,
   Ազաբներ ժողվան եկան թամաշի համար:

Կրկնակ.

Այ ճընճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սպիտակ փորիկ,
Ուտեն կըտիկ,
Խըմեն ջըրիկ,
Առվի եզրիկ,
Պըստիկ-մըստիկ,
Փախչեն, էրթան
Ման գալու համար: